ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091 435136 Է. հասցե՝ foi@foi.am,
www.foi.am, www.ogp.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

10.08.2015թ
257-4-ի

ՀՀ էներգետիկայի և բնական
պաշարների նախարար
պարոն Երվանդ Զախարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Զախարյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպությունն իրականացնում է Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների երկրորդ ծրագրի (http://www.ogp.am/u_files/file/commitments_OGP_AP2_ARM.pdf) իրականացման մոնիտորինգ:

Մոնիտորինգի անցկացման համար խնդրում ենք տրամադրել Գործողությունների ծրագրի առաջին հանձնառության իրականացմանը վերաբերող հետևյալ տեղեկությունները.

1. 2015թ. օգոստոսի 1-ի դրությամբ Հանրապետական երկրաբանական ֆոնդում առկա տեղեկատվական բազան քանի՞ տոկոսով է թվայնացվել:
2. 2015թ. օգոստոսի 1-ի դրությամբ կատարվե՞լ են ուսումնական աշխատանքներ Հանրապետական երկրաբանական ֆոնդի համապատասխան աշխատակիցների հետ: Եթե այո, ապա քանի՞ աշխատակցի հետ:
3. Կազմակերպվե՞լ է հանրային իրազեկման արշավ (բուկլետների տպագրություն և բաժանում, կայքի շնորհանդես, այլ միջոցառումներ): Եթե այո, ապա մինչ օրս ի՞նչ է իրականացվել:
4. Պարտավորության ամբողջական իրականացման համար և դոնոր կազմակերպությունների կողմից, և պետական միջոցներից որքա՞ն ֆինանսական միջոցներ են հատկացված: Որքա՞նն է մինչ 2015թ. օգոստոսի 1-ը ծախսվել:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:
Շուշան Դոյդոյան
ԻԱԿ նախագահ